ՄԻՆԸ.– Նազար ախպեր, արի էդ հսկաներին էս մեկ անգամը ներիր, մեղք են:

ՆԱԶԱՐ.– Չէ, էդ չխնդրուէք, որ չեմ ընդունի, էս մեկ կռիւն է ու աստուած: Սրանց պիտի ջնջեմ:

ՄԻՆԸ.– Քաջ Նազար, էդ ո՞նց է, որ չես վախում:

ՆԱԶԱՐ.– Վա՜խ, ի՞նչ բան է վախը: (Խմում է:)

ՄԻՆԸ.– Բա քաջութիւնն ի՞նչ տեսակ բան է, որ քաջերը միշտ էսպէս են խօսում:

ՆԱԶԱՐ.– Քաջությո՞ւնը… դատարկ բան է քաջութիւնը: Ահա էսպէս բռնում եմ հսկաներին, (ցոյց է տալիս) էսպէս խփում, գլուխները թռցնում, դա եղաւ քաջութիւն: Այ, քաջութիւնն էն է, որ իմանաս, թէ ի՞նչ բան է վախը: (Խմում է:)

ՄԻՆԸ.– Ա՜յ քա՜ջ: Բաս էնդուր ես անվախ կռւում, է՞:

ՆԱԶԱՐ.– Կռի՞ւ. ո՞վ է կռւում: Հենց գիտես թէ ե՞ս: Կռիւը ինքը իրեն-իրեն կռւում է: Կռուի միջին իսկի միտս էլ չի, թէ կռւում եմ:

ՄԻՆԸ.– Խօսքդ շաքարով, Քաջ Նազար, հսկա շա՜տ ես ջարդել,

ՆԱԶԱՐ.– Բի՜… հսկա՞… (Գինի է լցնում ու խմում) ճանճի չափ…

ՂԱՌԱՂՈՒՌԱ.– (Դուրս նայում ամրոցի ատամներից, նրան հետեւում են Ղոռոբուղան եւ միւսները:)

ԹԱՄԱԴԱ.–

ՎԱՐԺԱՊԵՏ.– (Անհանգիստ շարժում են անում:)

ՆԱԶԱՐ.– (Վեր է թռչում) Հը՞, հսկանե՞ր են,

ԹԱՄԱԴԱ.– Չէ՜, դու քո բանը պատմի:

ՆԱԶԱՐ.– Գինի տուէք: Էդ հսկաները որ չկան, սիրտս շատ տխուր է: Համա մի անգամ…

ՎԱՐԺԱՊԵՏ.– Լսի՜ր, ժողովուրդ, լսի՜ր,

ՆԱԶԱՐ.– Կռիւ եղաւ մի անգամ, գեադա, Գոգ-Մագոգաց աշխարհքում: Հսկաներ եկան վրաս: Հարիւրը եկան՝ փրթեցի, հազարը եկան՝ փրթեցի: Յետոյ եկա՜ն, եկա՜ն եկա՜ն… Գալիս են, փրթում եմ, գալիս են, փրթում եմ: Վերջը ձեռքիս թողի, ինչ ուզում է թող ինքը անի: Էսպէս ջարդելով, ջարդելով հասա Հաբեշստան: Էն է, երբ զարթնեցի՝ տեսա, որ բոլորին էլ փոշի եմ դարձրել, տուել քամուն: (Հանում է մի շորի փաթաթած կտոր) Էս մի հատիկ փոշին է մնացել էդ հսկաներից հիշատակ: Մինն էլ տէրտէրի մօտ է: